



# Մ Ի Ս Ա Կ Ա Ն

## ԿԱՄ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԵԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ

**Մ**ԵՐՉԱՒՈՐ նոր տարւոյ մէջ կը հրատարակուի ի մամոց Ռւխտիս Մխիթարայ՝ և բազմավաստակ Հ. ՂԵՌՆԵՐ Վարդապետի ԱԼԻՇԱՆ արդէն ծանուցուած ու իրաւացի անհամբեր յուսով սպասուած՝ մեր հայրենի աշխարհի վերաբերեալ՝ աշխարհագրական -- պատմական -- հնագիտական նոր երկասիրութիւն մ'ալ :

Այս հետաքննական ընդարձակ գրուածքին խորագիրն է ՄԻՍԱԿԱՆ կամ՝ Տեղագիր Միւնեսց աշխարհի . իր նախընթաց Շիրակ, Սիսուռան ու Այրարատ հատորոց հաւասար հմտութեամբ, մանր ու անխոնջ քննութեամբ և օրինակելի ջանքով երկասիրուած , ու անոնց նման զարդարուած աշխարհացոյց քարտիսիւ, բազմակիւ ընտիր պատկերաք, գունաւոր մանրանկարներով և նմանհանութեամբք , Համառօտ ըսեմք , ինչպէս մատենագրական ոճոյն, այսպէս նաև նիւթական շքեղ տպագրութեամբ՝ Հեղինակին և Այգիս մեծ պատիւ ընող աշխատասիրութիւն մ'է - վախճանէ աւելի մեծ քառածալ թերթերէ պիտի ձեւանայ ամբողջ գրուածք :


Հիմկու հիմայ, իբրու ճաշակ մը եւեթ գրութեան ոճոյն և տըպագրութեան, կը համառօտեմք յառաջին թերթիցն հետեւեալ աշխարհագրական և պատմական տեղեկութիւններն :

**Հ**ՅՅԻԱԿԱՆ սեփական կերպարանք՝ Այրարատեան բնաշխարհէն զատ, ուրիշ զտեղ այնչափ ճշգրիտ չեն երևնար յերկրի Հայոց՝ որպէս ի Սիսական աշխարհի. վասն զի Թէպէտ Տուրուբերան աւելի կեդրոն է և ճիս ազգային յիշատակօք, այլ Սիւնիք յամառազոյն իմն երեցած են ի պահպանութիւն ազգային ոգւոյ և աւանդից, ունելով բազմութիւ նշխարս և արձանս նախնեաց, գրաւորս և անգիր. և զարմանային այն է՝ որ Հին ժամանակներն մինչ այնչափ սերտիւ յարուած չէին երևնար ազգին համաշխարհական վարչութեան հետ, ամբողջն պահէր են զոգի ազգային. որոյ պատճառն անշուշտ բնակչաց ազատասեր բնաւորութիւնն եղած է, և նաև քաջութեան կորով, որով երկար ատեն գէժ կեցան օտարաց բռնութեան, օժանդակուելով երկրին գիրքէն ու բնական հաստուածէն ալ, ինչպէս ընթերցողք պիտի տեսնեն մեր յառաջ բերած բնական և պատմական ծանօթութիւններէն, և որոց զխաւորն այն է, որ երբ Արշակունեաց տիրած երկրէն վազուց արգէն խափանուած եր Հին Հայկազանց անունն և իշխանութիւն, և Արշակունի հարստութեան վերնալէն ետքն ալ, միայն իշխանք Սիւնեաց՝ Հայկազունք կը կոչուին Բագրատունեաց ժամանակ, ինչպէս անոնցմէ յառաջ ու ետքը, Այսրաստեան զատ նուազ նշանակութիւն չունի և այն, որ աշխարհագրական գրիւքն օտարխառն իմն կը սեպուի Սիւնեաց երկիրը. զի Թէպէտ մէկ կողմէն փարուած է Այրարատ և Վասպուրական Հայկական հարազատ գաւառաց հետ, այլ ուրիշ կողմանէ՝ յալալեղաւաց և ի կիսահայոց, եթէ մարտի է այսպէս կոչել զանոնք, որպիսիք են Ուտիսոյ, Արցախայինք յարեւելից, և ի Տարսուոյ՝ մարտապահքն Ատրպայիլիք. Թողունք վրախառն Գուգարաց մերձաւորութիւնը:

Մեր Հին աշխարհագիրն աւելի պարզադոյն ուղեւորով նկատել Սիսական աշխարհին գիրքը, զՍիւնիս այսպէս համարուելու կը սահմանադրէ. — «Յէլից կայ Այրարատոյ, ընդ մէջ Երասխայ և Արցախայ»: Եւ յերաւի, Այրարատ բնաշխարհի հետ Սիւնեաց աշխարհը զօգտալ է յարեւմտից, հաւասար ի հիւսիսային ծագաց մինչև ցհարաւայինս. այսինքն ի վարածնունեաց մինչև ցՎարդուր և ցՈտն Մասեաց, այդ երկուքին մէջ անջրպետ ունենալով Գեղամայ ծովըդեր արեւմտեան լեռանց պարը, և անոր հարաւակողման Վայոց ձորոյ լեռները. զորովք քերելով Երասխ կը բոլորէ կը պատէ զամենայն զհարաւ-արեւմտեան և զհարաւային սահմանս Սիւնեաց, որոշելով զայնս ի Վասպուրական և յԱտրպատական Հայոց, մինչև Խրատաֆերին անուանի կամուրջն, և մինչև ի ստորոտս լեռանց կամ բարձրաւանդակին, որ կը զատէ իր օժանդակներով ու Վուր գետով, ու բաժնելով յԱրցախայ կը ձևացնէ աշխարհին արեւելեան սահմանը. Թէպէտ և այս մասին սահմանագիծը որոշ չէ, նոյնպէս և ոչ քաղաքական վարչութիւնը, որով Արցախ՝ կցորգաբար կոչուած է նաև Փոքր Սիւնիք: — Սիւնեաց աշխարհին հիւսիսակողմը անձուկ է, զոր կը փակէն յարեւելից հիւսիսոյ, Ուտիսոյ, Աւտիսոյ և Այրարատ յարեւմտից հիւսիսոյ. որոց հետ կու գան կը խառնուին Գուգարաց աշխարհին արեւելեան հարաւային եզերքն:

Սիւնեաց արեւմտեան կողման սահման գնելով զԵրասխ, հետը միացուցինք նաև Դախնուանի գաւառը, որ առ նախնեօք երբեմն, մանաւանդ Թէ յաճախ, Վասպուրականի մասն կը սեպուէր. և այն պատճառաւ՝ երկուց աշխարհաց տիրապետողաց մէջ սաստիկ վեճք և հակառակութիւնք եղան. այլ ըստ բնական գրիցն՝ Սիւնեաց կը վերաբերի այն, մեծ գետոյն այժմեան ընթացին համեմատ, որ Թերեւս յա.

առջին ժամանակ աւելի մերձաւոր էր յայլ գաւառս աշխարհին, և յաջողովմանէ  
գուրս կը թողոյր Նախճաւան գաւառը:



Առնեղ. — Ս. Գրիգոր վանք.

Առնեղաց աշխարհը իրարմէ որիչ երկու մասունքը ունի. մին Հիւսիսային՝ անձուկ  
և բարձր. Գեղամայ Մովսէս տաշաճ՝ կամ չորս կողմը պատող հարթ երկիրը. և այդ  
ծովն ելծէ ոչ զկէս, գէթ երբորդ մասը կը գրաւէ. և ամէն կողմանէ շրջապատեալ է


լերանց՝ կ'ընդունի յինքն գետակս, անհազորդ մնալով երկրին ուրիշ մասանց և գետոց, և միայն ի միոյ ծայրէ արձակելով զառուն Զէնկի, որ է Շրազքան գետ Այրարատայ. և որովհետև բնական դիրքովը այսպէս զատուած է Սիւնեաց աշխարհին մեծ զանգուածէն, մինչև առանձինն իսկ Երկիր կամ Սլշխարն Գեղարանայ կոչուել, անոր բնական նկարագրին տեղագրութիւնն ըրած ենք Փեղաբունեաց կամ Սոթից գաւառաց վրայ խօսած ատեննիս: Իսկ երկրորդ է մեծագոյն մասն Սիւնեաց աշխարհին է հարաւայինն, որ կ'իջնայ ընդ մէջ Երասխայ, և աշխարհաց Վասպուրականի և Արցախոյ, ձուածն իմն ձգուած ի Հս. Մ. ընդ Հը. Նշ. երբու հարիւր մըն ընդ երկայն և եօթանասուն ընդ լայն:

• •

Սիւնեաց աշխարհին բնակութեան, որով և պատմութեանն սկզբնաւորութիւնն, մեր պատմեաց աւանդութեամբ՝ գրեթէ անտարակուսելի կերպով, Հայկայ զարմերէն յառաջ եկած է. և թէպէտ ուրիշ տոհմեր ալ խառնուած են անոնց հետ, ու երկրին այս կամ այն կողմը գրաւած, բայց միշտ՝ մանաւանդ իններորդ և տասներորդ զարուց մէջ կատարուած ազգային իշխանութեանց վերանորոգութեան ատեն, Հայկականց տոհմը հռչակուած է յաշխարհին: Մովսէս Խորենացի, և իրեն հետեւելով նաև այլք՝ հինգերորդ ի Հայկայ արու գաւակ կամ շետ կը գնեն զՄիսակ, որոյ անուամբ կոչուած է Սիւնեաց աշխարհ. « զայր սեգ և անձնեայ, բարեգեղ, կորովաբան է գեղեցկագէզն »: որոյ հայրն Փեղամ՝ « Սմա՛ զմեծ մասն ընչից իւրոց ատեալ, և ծառայս՝ անձինն բազումս, սահմանս հատանէ նմա ժառանգութեան՝ ի Մովէն (Փեղամայ) ընդ արեւելս մինչև ցղաշտ մի, ուր գետն Երասխ հատեալ զբարանձաւս լերանց՝ անցանէ ընդ իոխոսն ձիգս և նեղս, ահագին գրգռմամբ իջանէ ի գաշտն: Ատ բնակեալ Սիսակ՝ ընու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Միսիիք: » այլ Պարսք յատակագոյն եւս Միսական կոչեն: Եւ յիրաւի, յատակագոյն և բնական էր ի Սիսակայ՝ Միսական կոչուած, ինչպէս ոչ Պարսիկք եւեթ, այլ և յետ նոցա Արարացիք ևս Միսիսան կը կոչէին. յորմէ անբնական ու անյարմար է Միսիսեաց անուան ածանցումը. ուստի և հաւանական ու այլ աւելի ընդունելի է ինձ միւս պատմեաց ոմանց ի մերոցն ի մէջ բերած աւանդութիւնն, թէ Սիւնեաց անուամբ նահապետ մի եղած ըլլայ, յորմէ Մեղրդիք գրակիցք Սիւնեաց. և թերեւս նաև անունն, Փեղամայ ծովուն Սեւան, և ի վերջոս Միսիիք՝ իբր Սեւունիք:

Հարկ էր որ ստուգապէս նշանաւոր մեկն ըլլար նահապետն Սեւուկ, կամ ուրիշով որ ուստի Սիւնեաց անուն կ'ածանցի, որպէս զի սովորաբար նոյն անուամբ կոչուի և աշխարհն ի համօրէն ազգայնոց մերոց՝ ի սկզբանց և այսր. և երկրորդ նորոգման ատենն ալ՝ նոյն անուամբ ծանօթանալ և գրուել ի Յունաց ժամանակին՝ Միսիսիս, Σιϋϋϋϋ. բայց թէ՛ իրենց և թէ՛ լատին հին հեղինակաց անծանօթ էին այդ երկուս անուանք. և ոչ միայն առ նոսա, այլ և ոչ ազգին պետութեան հնագոյն յեշտակարարանց մէջ կը յիշուին Սիւնիք, գրեթէ ոչ յառաջ քան զմուսս քրիստոնէութեան: Կորիւն՝ մի յառաջին մտտեմագրաց մերոց՝ Միսական աշխարհ կը կոչէ զայս երկիր. յետինք՝ Միսական աշխարհ, և Կազանկատուացի՝ հանդերձ բնակչքն Միսաստանիք:

Մակեդոնացւոց աշխարհակալութենէն ետքը Պարթեւազանց ձեռքով կտտա-  
րուած ազգիս առաջին վերանորոգութեանն ատեն Սիսակեանց նազապետն ոչ միայն



Հայր Բովնանևափանք .

Հայաստանի արեւելեան մասին կողմնակալ գրուեցաւ, այլ և նոյն ցեղէն « Առան-  
անուանի և քաջ կարգեցաւ ի Պարթեւէն Վազարշապա կողմնակալ, բիւրաւոր »\* :

\* Մովս. Խորենացի Բ. 8 :


Անունս Արան՝ քաղ ծանօթ է արևելեան պատմիչաց, և ի մերոց՝ ի Կաղանկատացւոյն և այսր, որք նոյն անուամբ կ'իմանան և կը նշանակեն Երասխայ և Կուրի միջագետքը, և աւելի կերպով մը գերկոսին աշխարհս Հայոց զԱրցախ և զԱւսի. այլ ընդարձակօրէն կը տարածի նաև Սիւնեաց արևելեան մասին վրայ, որուն կը յարմարէր ըլլալ բիւրուսի կողմնակալ. ինչպէս Սիւնեաց նահապետն՝ Հայոց արևելեան զորաբանակին գլուխն էր, երկու բիւր մարտիկ զորաց գունդ գրեթէ միայն իւր աշխարհէն հաւաքելով:

Թեպէտ ի Վաղարշակայ և յայլոց այսպէս կարգի գրուած և սահմանուած, սակայն կ'երևի թէ Սիւնիք՝ Հայոց ուրիշ սոհմից և պետական իշխանութեան հետ սերտ յարաբերութիւն մը չունէին, մինչև Տրդատայ ժամանակ, և իրեն ստեղծն ալ և յետոյ՝ յաճախ առանձնութիւն մը, կամ՝ տպատմութեամբ և ինքնակազմութեամբ, և կամ ուրիշ գրացի ազգաց հետ միաբանելով, առաւել բերուցն և հպատակութիւն ցուցնելով Պարսից՝ տիրապետաց Ասիոյ, պատմութեան ծանօթագոյն ժամանակները. իրենց նախնոյն Սիւնիայ նման սեգ ընաւորութիւն ունենալով, որով և կորովութիւն և քաջութիւն. զոր ոչ միայն պատմութիւնն լուսնայն կը ծանուցանէ, այլ և յայտնի խօսքերով նաև գրիչք մեր. յորս երիցագոյնն Կորիւն՝ զագանակիտ, վայրենագոյն, ձիադարարոյ կը կոչէ զսահմանս Սիւնեաց. « և ի նոցունց իսկ ի վայրենեացն՝ եպիսկոպոսս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անուն կոչէր Անանիս »: Ըրիկ մարդիկներէն ոչ ինչ ընդհատ՝ պատմութեանց մէջ մեծոգիք և վեհաշունք կը փայլին և կանայք Սիւնեաց, պետպէս շքնաղ և վսեմական կերպարանօք, առաւել քան յայլ աշխարհս Հայոց. ինչպէս ճարտարաբան շարաթածուհիքն Մանակիս և Ռիւրեղ, մուսայասարաս կուսանն Մանակարդիստ՝ քոյր մեծին Ստեփանոսի Սիւնեցւոյ. Վահանայ Գողթնեցւոյն քոյրը, կամ ով որ է երգահանն ի պատիւ նորս յօրինուած Զարնակայի շարականին. հրաշագեղն և յրանժոյգ Շահնազուխտ. վկայաշնորհն Շոշան ևին Աշոտոյ որդւոյ Փիլիպպէի, որ ամենաշքեղ յուզարկաւորութիւն ըրաւ իր երկանը. իսկ ինքն, աւանդ, առաքինօրէն ժուժկալուութեամբ բանտարգել մեռեալ ի Գուլին, բացընկեցիկ կ'ըլլար. — և ի տէրն Սիւնեաց պատուաստ զուգեալ՝ Մովիս, Գերեհնականն Արծրունւոյ գուսարը, որ գիտցաւ պատշաճեցուցանել զպին գերափայլ ի կապիճ մատանւոյ հրաշակերտեց Վայոց ձորոյ. — Աշոտոյ գուսարը՝ Մարիամ տիկին, մայր քաջաց և առաքինեաց. — և մինչև իսկ դժպոնիկն սպանիչ Ստեփանոսի մեծի քերգողի, որ սեւաշուք նշուլիքն և ինքնադատ սպաշաւանօք սոսկուցն կ'ազգէ, ապա և զարմացուցնուց...

• •

Տասուերկու գաւառ կու տան Սիւնեաց աշխարհի մեր ամեն պատմիչք և աշխարհագիրք. յորս հնագոյնն (Յորդանայի) արևմտեան սահմաններէն կը սկսի թուել և նշանակել. իսկ Որբէլեան՝ որ իր ժամանակին նորագոյն անուանքը հիներուն հետ կը զուգաւորէ, ի գլխաւորէն՝ կամ՝ աշխարհին մէջ տեղն եղած իշխանականէն սկսելով, այսպէս կը կարգաբանէ. « Գաւառս ունի երկոտասան. Աւալինն՝ որ ունի զբուն գագ իշխանացն և հայրապետաց՝ ՄՂՈՒԿ գաւառ, անուանեալ ի Մղկայ գաւառապետէ: Բ. ՎՍՈՅՑ ՁՈՐ, որ ի հասարակական գիպուածոց ողբոց և աշխարանաց՝ կոչեցաւ Վայոց Ձոր: Գ. ԳԵՂԱՌՈՒՆԻ, որ ի Հայկեան Գեղամայ

կոչեցաւ Գեղարքունի: Գ. ՍՐԹԻՑ ԳԱՆՈՒ, որ սակս հանապազորդեան բքոց և  
գառնաշունչ օգոցն՝ կոչեցաւ Սոթք: Ծ. ԱՂԱՀԻՔ գաւառ, որ այժմ՝ կոչի Բաշա.



Նորատուս. — Ս. Գր. Լուսատրիչ եկեղեցի.

բաղ. խոժոռարեղդ: Զ. ՀԱՐԱՆԻ գաւառ: Է. ԲԱՂՑ գաւառ, որ այժմ՝ կոչի Սձեն,  
որ է Բազկայ անուանեցաւ: Ը. ԿՈՎՍԱԿԱՆ գաւառ, որ այժմ՝ Գրնամ կոչեն:  
Թ. ԱՐԵՒԻՑ գաւառ, որ այժմ՝ կոչի Դաշոն և Մեղրի: Ժ. ԶՈՐՑ գաւառ, որ

ունի զանաառոյց ամուրն Բաղաբերդ, որ այժմ՝ կոչի Կարս: ԺԼ. ԵՐԱՅԱ զաւառ  
և ԳՈՂՅՈՒ: ԺԲ. ՃԱՆՈՒԿ զաւառ որ և ԶՈՐՆ որ Շահապօսն կոչի: Ահա այսոքիկ են  
գաւառք երկոտասանք զլիւսաորք Սիւնեաց: Բայց այլ եւս ունի գաւառս յորով՝ զոր  
աշխրհեցան և որ փոխեալ են անուանք սոցա, և որ յայլ գաւառս բաժանեալ են ։

Աղէկ կ'ընէ պատմիչն զայս ծանուցանելով. բայց լաւագոյն եւս էր եթէ մեզ  
աւանդած ըլլար նաև ուրիշ աւանձին գաւառներուն փոփոխեալ անուանքն և  
արոհմունք, և զոր ճիշդ չգիտնալով՝ տարակուսական կը մնան մեզ երկոտասան  
հին գաւառաց ոմանց սահմանք: Գժուարին չէր որ մի և նոյն գաւառք այլ և  
այլ անուաներ ունենան, ինչպէս Վայոց ձորն՝ նաև Եղեգնեաց ձոր կոչուած է.  
կամ մի և նոյն գաւառը՝ կրնար երկու ծանօթ մասունք բաժնուիլ, ինչպէս Ճահուկն  
և Շահապօնք. այլ երբ երկուց գաւառաց մասունք՝ մի և նոյն նոր անուամբ  
կոչուին, շփոթութիւն կրնայ յառաջ գալ, որով գժուարին՝ մանաւանդ թէ  
անկարելի կ'ըլլայ ճշգրէտ հին պատմական գաւառաց անուանքը. մանաւանդ զի առ  
հինսն յիշուած երկոտասանէն զատ, քառասունի չափ Սիւնեաց գաւառաց ա-  
նուանք կան առ միջին և յետին գրիչս մեր:...

••

Ըսինք յառաջ որ թէպէտ ստոյգ է Սիւնեաց երկրի քնակութեան սկզբնաւու-  
րութիւնը, մանաւանդ Սեւանայ ծովուն շորս կողմն գրաւող տափին վրայ, բայց  
աշխրհեցան հաւաստի՝ աշխարհին մեծի մասինն, և ոչ գեպք և անցք իրաց տեղւոյն,  
գրեթէ մինև ցվերջին դար իշխանութեան Արշակունեաց. անանկ որ յետ երկուց  
նախահարց աղբին, Սիսակայ և Աւանայ, առաջին նահապետ կամ նախարար կը  
յիշուի, Քրիստոսի երկրորդ գարուն կիսուն, Բակոյր՝ առ Տիրանաւ Ա. որոյ չքնա-  
զագեղ հարսն՝ զԵպիֆանի, ի ժամու ընթրեացն ոմն ի բազմականէն՝ Տրդատ Բագ-  
րատունի « յիւրն քարշեաց ի բազմականն... և զբարձակիցսն ի բազմականացն ի  
բաց պուղեաց... և այնպէս յիւր վանսն եկեալ, իսկոյն ի ձի ելեալ հանդերձ  
հարձիւն ի Սպեր գնաց », Գար ու կէս ետքը, ի սկիզբն շորորդին, Հայաստան  
աշխարհի քրիստոսական սուրբ կրօնիւք լուսաւորութեան ժամանակ, ընդ Սրբոյն  
Գրիգորի ի Կեսարիա զղկուած իշխանաց հետ՝ առանց անուան ի կարգի վերտասանիցն  
կը յիշուի յԱզատանգեղոսէ ըստ մեր օրինակաց՝ Խշխանն Սիսակաց... որ ի գարձին ի  
Կեսարիոյ՝ աննոյցմէ քաջերուն հետ հաւասար Տարօնոյ քրմաց և անոնց առաջնորդին  
Արձանայ գէմ արիաքար նահատակեցաւ ի պատերազմունս. և Հաշտենից գասալիք՝  
այլ գոռ իշխան Խորձեսն, որ կը խորոստայր իր վրայ, « հարեալ միճովն զազաւարսն՝  
և կարեալ զնա ի զօրացն, փախստական արար... և հանեալ հանդեպ Կննակեան  
վանոցն՝ մղեալ ընկէց յերկվարէն. և իջեալ՝ դանակաւ կտրեաց զգլուխ նորա »:  
Նա ինքն՝ իբրև առաջնորդ բանակին, քրմապետաց սպանմանէն ետքը՝ պատերազմին  
խաղաղութեան փոքր հնչեցուց. Քանի մի տարի վրան անցնելէն ետքը՝ ի գարձին ի  
Հաղովմայ նոյն տեղաւանքը ի Կուսուս հասնելով, արքունի բանակին և Սրբոյն Գրիգորի  
հետ, իր հրամանաւ Սիւնեաց իշխանն կանգնեց հոն իտալ մեծ, որոյ առաջի երկրպագու-  
թեան պաշտօն մատուցին. և երբ Գեղուհոնի հիւսիսական հէնք հոն հասան և

\* Զինքը Գրակ, ի Պատմ. Տարանց :

յարձակեցան, Տրդատ Թագաւոր իր բանակին աջ Թեւը այս իշխանին կը յանձնէր, որով զարկաւ խորտակեց զչոնս, և անոնց աջ գնդին Թեւապետը հրաւիրեց ի մենս:



Ծակցար. — Բնակատարը.

մարտ, ու նախ սպաննելով իրարու երիվարքը, շերտերան զոյգ ի վայր անկան և բուռն հարին զմիմեանց... և աշագարեալ նստաւ (Սիւնեցին) ի վերայ (այլոյ երիվարի), և գարձեալ՝ կարեաց զգլուխ նորա, ձգեալ ի մախազն և գարձաւ ։

Ու երկրորդ օրը, երբ կրկին բանակք միւսանգամ իրարու հետ զարնուեցան, Մոսկայ իշխանը նեղն իննելով՝ յօգնութիւն կը կանչէր զՍիւնեին. « Են որա հասեալ որպէս զարագութիւն արծուի՝ հալածեաց զարսն ի նմանէ », — Սա ինդրեց և ընդունեցաւ ի Ս. Գրիգորէ Ասորի վարդապետ մը և ուսուցիչքրիստոսական օրինաց. որոյ հետ « մեծաւ ուրախութեամբ եկն յաշխարհ իւր, և զամենայն ընտանիս իւր մկրտեաց աւազանին լուսաւորութեամբ, և կործանեաց զամենայն բազինս կոռնց, և գարձոյց զաշխարհն ամենայն ի քրիստոնէութիւն », իսկ երբ քարոզութեամբ հոն հասաւ մեծն Գրիգոր, « ընդ առաջ ելեալ մեծ նախարարն Սիւնի, բերեալ յաշխարհ և ի տուն իւր. և մեծածախ ընծայիւք և արքունական պատարագօք պատուէ զնա, և շրջեցուցեալ ընդ գաւառսն ամենայն՝ հաստատէ ի հաւատս. և ի պատշաճաւոր տեղիս շինէ եկեղեցիս, և կանգնէ զնշանն տերունի ». ու ազգային առաջնորդ մը ինդրելով, ընդունեցաւ ի նմանէ ի Վաղարշապատ զԳրիգորիս ոմն աշակերտ իւր. « լի ամենայն հմտութեամբ, երիտասարդ հասակաւ... տանիւ վիճակեցուցանել յեպիսկոպոսութիւն աշխարհիս Սիւնեաց. աստանօր սկիզբն եղեւ եպիսկոպոսութեանս Սիւնեաց », Յաւալի է որ պատմիչք մեր այսպիսի քաջ և մեծա-հաւատ նախարարի անունն մեզ աւանդած չեն...»

Զէ թէ իրեն հետեոյ, այլ ամենեւին օտար երեցան Սիւնեաց իշխանք մեծին Տրդատայ կենաց վերջի տարիները. ինչուան Սասանեան Շապուհոյ սագրանօք զաւա- շանել ալ ուղեցին. ու երբ ծերունի Արշակունին փախաւ յԵկեղեց քաւառ, « զկնի նորա զնազին մտնուանդ ազատքն Սիւնեաց, որք առաւել հրամանակատարք Շապուհոյ լինէին, վասն աշխարհին իւրեանց խաղաղանս մնալոյ, յորոց և խոցեալ լինի թագաւորն, որպէս թէ յանգէտս ուստեք զիպեալ պատահեաց նեռն » :

Անոնց համախոհ չէր՝ մեծին Տրդատայ որդւոյն ժամանակի Սիւնեաց նահապետն Վաղինակ, Խորովու սերեւիւն, որում կնութեան տուաւ Բակուր Աղձեաց ապ- ստամբ բզեշխն պպանելոյ մատաղ դուստրը, և անոր ձեռքին հետ նաև Աղձեաց տունը. և անուանեց զնա բդեաշխ, և պայազատ տան նորա: Ժառանգն բազմացաւ, և հանգերձ աշխարհաւն և ամենայն ուժովն կայր բդեաշխ Վաղինակ ի ծառայութեան արքային հանապազօր. մինչև որ վրան ժամանակ անցնելէն ետքը՝ զարձաւ ժա- աւանգութիւնն ի Խիշա որդի Բակուր, որ ազգատոհմին կոտորածէն ազատած էր: Վաղինակայ որդին էր հաւանաբար Անդովկ իշխան Սիւնեաց, որ այլոց հետ ընկե- րեց սրբոյն Ներսէսի մինչ ի Կեսարիա՝ եպիսկոպոսական ձեռնադրութեանն համար, ու Արշակայ երկրորդի ատեն՝ այլ և այլ գիպուածոց մէջ նշանաւոր հանգիսացաւ. ու յաշորդեց զՎաղինակ նաև յիշխանութեան Աղձեաց, և կ'աւանդի թէ անոր սահմանակից Տիգրանակերտ կամ Ամիդ քաղաքին ի Շապուհոյ Պարսից արքայէ պաշարուած ատեն, ինքն Անդովկ քաղաքապետ էր, և ռիսերիմ թշնամութեամբ առջի բերան դէմ կեցաւ. և երբ մեծ եղեռնագործութեամբ Արշակ կին առաւ իր գե- ղանի դուստրը զՓառանձեմ, գաւառանելով անոր ամուսինը զԳնեւ զեղբորորդին իւր, Շապուհ՝ Արշակայ հաւատարմութիւնը վաստղեկու գիտմամբ կ'ուզէր իր դուստրը անոր կնութեան տալ. կասկածելով հայրն ընդ անարգանս գտերն թագուհոյ, խորամանկութեամբ և ոսկւով կաշառեց երկու թագաւորներուն հաւատարմիցը, ու զանոնք իրարմ զտեկումն թշնամութիւն և պատերազմ գրգռեց մէջերնին, որով մնասեցաւ նաև աշխարհն Հայոց: Բայց այլ պատմիչք (Սիւնեաց և Աղուանից), Անդովկայ թշնամութեան, — եթէ նոյն անձն է մեր յիշածին հետ, —

ուրիշ պատճառ կու տան, սեյ և խրոխա բարուցը նշանակ: Ձի երբ Եապուհ  
Թագաւոր, Արշակայ գերութենէն ետքը քննեց, կ'ըսեն, Հայոց նախարարական




Խաչարձան ի վերին կղնուտ.

իխանութեան բարձից կարգը, ըստ գրոց Արաթանգեղեայ, հրամայեց Անդովկայ որ խնջոյից աստն՝ չորեքտասաներորդ գահը նստի. « և նա հպարտացեալ ոչ ինչ Զաշակեաց, և գգացուցին թագաւորին վասն այնր. ոչինչ փոյթ լինէր նմա »: Ու երբ նայն միջոցներուն թագիրք կ'արշաւէին ի սահմանս Պարսից, և Շապուհ իր ձեռքին և իխանութեան տակն եղող ամէն ազգերէ զօրք կը ժողվէր, շայոց իխանաց և զօրաց հետ՝ թշնամեաց վրայ կը վազէր, գրեթէ թափուր թողով զաթուռանիստն զՏիգրան, յանգուզն կամ յուսահատ վրէժինդրութեան խորհուրդը երկնեց Անդովկ, ու արքունի բանակէն բաժնուելով « զօրօքն իւրովք՝ հազար ութսուն (կամ հազար եօթն հարիւր) արամբբ, ժիր և քաջազնաց երիվարօք հասանէր ի Տիգրան, և զօրան թաքուցանէր արտաքոյ քաղաքին. ( և ապա մուծեալ է ներքս ), ... առին զբանձ ոսկոյ և արծաթոյ անհամար, և գոհարս ականց պատուականաց, և զուարն բազմագին, և զոր ինչ բառնալն կարացին ի թագաւորական տանն և յամենայն մեծամեծաց ասնց՝ աւար առեալ յոյժ անբաւ. ժողովէ զամենայն ի Բաղաբերդ, և զամենայն գաւառացն իւր գարմանս անասնոց այրել հրամայէր. և զոր ինչ ուստել է մարդոյ՝ ի բերդն հաւաքեալ, և զէն, օձառս, կազմածս հեծեւրոց, և ստեւալ հրաման Անդովկայ՝ ամենայն Սիւնեաց փախել, և զտունս և զհամբարս այրել... ջրուեցան ընդ ամենայն երկիր. և ոչ որ իշխէր զանուն Սիւնեաց ասել, և զքսան և զհինգ մարի՝ ապակը անմարդ կայր երկիրն այն, Ապա եկեալ Շապուհ... լի ցաւ մամբ ետ ամենայն զօրացն հրաման՝ ելանել ի Սիւնիս, գերել զիստուն և զանասուն, և եկեալ ոչ ինչ գասնէին... ( և ոչ կարեւոր անուղ զամուրն Բաղաբերդ, ստիպէին ) շուրջ զամրոցան աւերել: Յայնժամ Անդովկայ պարսպարդ գտեալ ժամ՝, թողու զբերդն. և մեծ աւարովքն անցանէ յաշխարհն Հուովայեցոց. և անդ մեծագոյն առեալ պատիւ՝ անդէն մեռանի »: Իսկ Շապուհ վրէժն հանելու համար՝ հրամայած էր զնել յարքունի դրան « ասնդ պղնձի, լի մոխրով հնոցի. և որ գայրն ի տեղին յայն՝ կոփէր ի նմա և ստէր. Սիւնեաց տէրութիւնն ընդ այս մոխրի ի վայր լիցի, և կեանք և խորհուրդ »: Սակայն այն սանդն ու վրէժը վերցուց Անդովկայ որդին, « սոստարանն և \* գիրատուն պերճապաճոյճն և դեղանին այն Բաքիկ, գործով գու վելի և հաւատով գերազանց ընաւից », ինչպէս կը գրուատէ զնա պատմիչ տոհմին, ի մենամարտի սպաննելով զՀոնն Հոնանգոյր, որ զնա ինքն Շապուհ թագաւոր ի կռիւ կը հրաւիրէր. և Շապուհ ի փոխարէն քաջութեանն կը գարձընէր առ Բաքիկ իր աշխարհին տէրութիւնը. « և աւանդէ նմա պատիւ՝ ընդ Բագրատունիս և ընդ Մամիկոնեանս համապատուիլ \*\* »: Բարկայ պայազատութեան այս յետին գեպը՝ կը հանդիպի իբր յամբ 378:

Մամ՝ իւր յաջորդը, Սիւնեաց ազգէն չէր, այլ Գնթունի և Բարկայ սենեկապետ, ու արքի մը նստաւ իխանութեանը գահուն վրայ (399-400). ըսոյց Բուզանդայ խօսքերէն կը թուի թէ ի Սիսական տոհմէն ըլլայ. վասն զի կ'ըսէ, թէ երբ Վարաչ գատայ ապստամբութիւնը նուաճեց Մանուէլ (377-80), և Սիւնեաց մնացորդքը եկան առ նա, « պատանեակք երեք միացեալք ի կոտորածէն Պարսից... և անուանք նոցա՝ միւսմն Բաքիկ, և միւսուսմն՝ Մամ, միւսուսմն վլադիմակ. և ընկալաւ զնոսա զօրավարն Մանուէլ, և եղև նոցա օգնական, և գարձ արար նոցա յերկիրն սիւ-

\* Մովս. կալանկատ Բ. 4 :  
 \*\* Ստեփ. Օրպէլեան. Ժ. 9 :

նեաց, և կացոյց զԲարիկ ի վերայ երկրին, և զերկուսն եւս ըստ իւրաքանչիւր  
չափու. և եր Բարիկ՝ նիզակակից զամենայն աւուրս կենաց նորա »: Բազաւանայ




Թանստի փանք.

պատերազմին մէջ ալ, ուրացելոյն Մերուժանայ ընդ Մանուէլի մենամարտին  
ատեն, երբ ինկաւ յերկվարէն, « Բարիկ տէր գաւառին Սիւնեաց՝ Հասանէր, նի-

զահաւ է վերուստ ի վայր ի կողին կարէր ընդ գեախնն, և ոչ կարէր յաւնել... և զՄերուժանայ զգլուխն ի բաց հասանէին »...»


ՁԱմ պայազատեց Բաբկայ եղբայրն Վաղինակ (401—410): Նոյն միջոցին մեծ Վարդապետն Մեսրոպոյ՝ հայերէն նորագիւտ գրերն հրատարակելու նպատակաւ հու գար յաշխարհն Սիւնական. « և անդ աստուածասէր Հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց՝ որ էր Վաղինակ անուն, բազում օգնութիւն գտեալ ի նմանէն վասն իրացն առաջի արկելոցն. մինչև հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց, և ժողովեալ մանկուսն առ ի նիւթ վարդապետութեանն. . ապա և զերկիրն Սիւնեաց գասուք վանականաց ընոյր »: Իրեն յաջորդն եղաւ՝ ձախողակ նշանաւ նշանագոյնն ի տեսար Սիւնեաց, վատշուէրն Վասակ որդի Բաբկայ, կատարեալ, օրինակ սխակեան սկսութեան, թէ լաւութեանց, թէ յուրութեանց մասամբբ, ուր առաջինք՝ ծածկեցան ի վերջնոցս, և ուրացելոյ անշնչելի անուամբը կնքեցին: Իր ժամանակակիցք՝ երէշագոյն թարգմանիչք մեք, գովութեամբ կը յիշեն զնա. Խորենացի՝ լռելեայն, թէ որպիսի փութով և առանց գանդաղէլու զրկեց առ Մեսրոպոյ՝ Անանիայ եպիսկոպոսի Հեա զԲենիամին թարգման, Աղուսինց տառերը հնաբերու համար. իսկ Կորիւն կը կոչէ զնա այր « խորհրդակաւ, հանձարեղ և յասաջ ինաց, շնորհասուր իմաստութեամբն Աստուծոյ՝ բազում ինչ նպատուութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իրրև որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ (Մեսրոպոյայ), և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալն ի գործ բերէր »: Բայց կրտսեր թարգմանիչք, (Սղիշէ և Ղազար) մեծապէս կը դարձնեն իր յետին գործոցը Հեա նաև առաջին կեանքը և ընթացքը: Այս ինչ յայտնի է, զի սեգ ու ամբարտաւան բարուց Հեա միացնելով և զհնարագիտութիւն և հաստատութիւն կամաց, ոչ միայն յաջողեցաւ յաղթել հակառակորդաց անձին իւրոյ և իշխանութեան, որոց գլուխ էր սեպուհն Սիւնի Վարդավազան, իր գատրայրը, այլ և աւագութեամբ և պատուով ուրիշ ամէն նախարարներէ վէր բարձրանալով, մարդպէս կարգեաւ բովանդակ աշխարհին, կամ Պարսից թագաւորին երեսփոխան. և ալ աւելի բարձրութեան թեկն անելով, արքունական թագիւ ալ կը մտածէր, կը բազմայր պսակել գլուխը, որ միայն կը պակասէր ի լրուսն փառացն յոր արդէն ժամանեք էր. երբ՝ « ըստ կարգի օրինացն արքունի՝ արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն, կապէր և զպատուազուրսն, և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զհաւանակուս ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարդարտօք և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր անձեր, և զգինզան յականիցն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբն, և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ... շքեղ և երևելի քան զամենեւեան երևէր բազմութեանն »: Այլ այս ամէն բանէն, ինչպէս և ի պատուոյն և յառաջին գովանի անուանէն, ի սուրբ կրօնիցն և ի կենաց՝ մերժեցաւ աւաղելի կատարածիւն, որ արդէն ծանօթ է մեզ ի պատմութեանց Փարպեցւոյն և Սղիշեայ:

Հոս կը գադրեցընէնք Սիւնեաց աշխարհի քաղաքական պատմութեան դոյզն  
ապշահը, զոր օրագրին միջոցաւ ուզեցինք ընծայել. թողով որ բանասերք քե



Սպիտակաւոր եկեղեցի Ի Հերմեր.

ատենէն լիուլի ընթեանուն Հեղինակին բուն գրչովն, սրտիւ ու սիրով, էր ՍԻՍՅԱՅԱՆԻՆ  
մէջ, միւս այլ պարծանք ազգային արգի մատենագրութեան:



Մեհաստան Մեռակայ.